ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 418-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 1443-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 1443-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածում՝

ա. «Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ (հանձնաժողովի նախագահ)» տողից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«Ոլորտը համակարգող փոխվարչապետ (հանձնաժողովի նախագահ)»,

բ. «Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ (հանձնաժողովի նախագահ)» բառերը փոխարինել «Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)» բառերով,

գ. հանել «Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավար (հանձնաժողովի նախագահի տեղակալ)» բառերը,

դ. «ՀՀ ոստիկանության պետ» բառերը փոխարինել «ՀՀ ներքին գործերի նախարար» բառերով.

2) որոշման N 2 հավելվածում՝

ա. 7-րդ կետը «իրականացնում է» բառերից հետո լրացնել «լիազումար նիստերի և» բառերով,

բ. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, իսկ լիազումար նիստերը՝ ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ